ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1681 - Ա **26 մարտի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի Հ. 562-Ա ՈՐՈՇՄԱՆ Հ. 1 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՄԱՍՆԱԿԻ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՍՈՍԵԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 8/2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վահան Ավետիսի Մեխակյանի (ծնված 19.10.1943թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Սոսեի փողոցի 2-րդ նրբանցքի հ.8/2 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 332.30քմ, որից 40.1քմ մակերեսով հողամասը Վահան Ավետիսի Մեխակյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասն է (վկայական տրված հ.143): Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 292.2քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1995 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման 29.09.2008թ. հ.4342ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 13.03.2009թ. հ.20/2-Ե/111 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 03.03.2009թ. հ.20-Ել-1461 եզրակացությունը, համաձայն որի Սոսեի փողոցի 2-րդ նրբանցքի հ.8/2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1.Չեղյալ ճանաչել Երևանի քաղաքապետի 2004 թվականի ապրիլի 9-ի հ.562-Ա որոշման հ.1 հավելվածի 13-րդ կետը և 2004 թվականի նոյեմբերի 22-ի հ.5419-2004 գլխավոր հատակագիծը:

2.Վերականգնել Սոսեի փողոցի 2-րդ նրբանցքի հ.8/2 հասցեում Վահան Ավետիսի Մեխակյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 40.1քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 292.2քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 332.30քմ մակերեսով հողամասի և 292.2քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

5. Աղբյուր Սերոբի փողոցի 2-րդ նրբանցքի հ.10 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Սոսեի փողոցի 2-րդ նրբանցքի հ.8/2 տուն»:

6. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Վահան Ավետիսի Մեխակյանի սեփականության իրավունքը սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

7. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Արաբկիր թաղապետարան:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

9. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ